Ետքաթ որը, եթէ հարսը միենայն զիւզումն է, թագուրի հայրը գաւուլ զուռնով զնում է քաւորի տունը և առւում. Հերթամմեցեք երթանք բարի ուրախութանու Բաւորը, քաւորինը և սրանց ընտանիքը գաւուլ զուռնով զալիս են փեսայի տունը, ուր մի քանի մասիկ ազգականների հետ օգի են իմում, նաշում, կաքաւում, երգում և ցրում աները. Բաւորին գարձեալ գաւուլ զուռնով նանապարհ են ձգում մինչև առնելը։

Խոկ եթէ հարսն ուրիշ զիւզ է, փեսայի հայրը հրահրում է բարեկամներին ու զբացիներին, քաւորին, ծխառէր քահանային, տանուտերին և երեցփախին. Նիւրասիրում է սրանց թեյզով ու նաշով. Սեղանի վերջը քահանան առաջարկում է. Շնեղանից ով որ կամենում է մազար երթալ, թողի մեռքին ընդունէ բաժակը։

Հարսնցուի զիւզն երթալ և հարսին բերել կամեցազնե-

<sup>(1)</sup> Մի քանի զիւզերում հայուսաները մարթում են մի եղ, որից հայուսաների ընթացքում պատրաստում են կերպեները. գուալ զաւուի առաջնորդութեամբ բնակութեան են եղա, եղամ զեսին և մինչդեռ մազորեց հարում է միոց. բաւորը եղամ է սրեան մի մի բաց կոզմէ և առանց վերցնեալ այս որինի միջից, կորզամ և այս միջնում ուղղվէ կորզան զրում է. Այս կոզմէրը համարում է անաւանին կողերի ամրաթեան և անցուսութիւններն. Մինչեւ մամանի թագուցը պրկում է եղի զոյց մի քանի մուշ զեսու իւր զալունի պատճենի մի և պատճ մինչ առաջան նաևն. Այս սպասութիւնը բացուերաւ է նրանով, որ եղը համար ում է ուսուին որինութեան կամ։

բըն առնում են քահանայի մատուցած օդին և բարեմախուռ-  
թիւններս խմում: Յետոյ քահանան մի բաժակ ևս առա-  
ջարկում է նրան, ով կամենում է հարսին իւր առնն իջեց-  
նել: Մինչև պատկը հարսը կերսանց առն չի մանում: Պետ-  
յի մօտ ազգականներից մինն ընդունում է բաժակը:

Յետոյ արգէն մի քիչ ել տեսում է ուրախութիւնն և  
բոլորը ցըւում են:

### ԲԵՎԵՐ-ԽՈԽԻՐ.

Նոյն շաբաթ օրը ճաշից յետոյ մազրուղները հա-  
ւաքում են փեսացուի տունը, նախանշչիկ անում, ա-  
պա ցըւում և ձի հեծած նորից հաւաքըւում: Այս ժա-  
մանակ փեսացուի մայրը բերում մի մի գաթայ է բաժա-  
նում բոլորին: Փեսացուի հարրը և քաւորն առնելով իրենց  
հետ հինան և ոհարկը, ձիաւորում են և ահազին ազմու-  
կով, երգով, խաղով ու գաւուլ գուռնի: առաջնորդութեամբ  
ուզգում գէպի հարսնցուի զիւզը: Երիտասարդ մազրուղնե-  
րը ճանապարհին աշխատում են իրենց բոլոր շնորհքները բա-  
նեցնել, արշաւում են, ջրիթ խաղում, երգում և հազար ու  
մեկ հանաքներ անելով գնում, հասնում զիւզ: Փեսացուի  
հարրն և քաւորն իինում են միջնորդի տունը, իսկ միւսնե-  
րին հրատիրում են հարսնացուի ազգականները:

Փոքր ինչ հանգստանարուց յետոյ, փեսայի հարրը մի շիշ  
օդի առած զնում է քահանային տեսութեան: Համբուրում է  
քահանայի աջը, մի բաժակ օդի առամ և մօրհնեան ի ծէր տ-  
ուում, խմում: Քահանան պատասխանում է: «Անուուն օրհ-  
նե, շնորհաւոր ըլլից: Ապա աեսմ՝ քահանային և միւսներին  
է հրամցնում, զերից մի բաժակ ել զարձեալ ինքը խմում և  
մնացածը տալիս աէլաէրանց զատարկելու: Յետոյ զերցնում  
է շիշը և զնում, զաւուլ զուռնի առաջնորդութեամբ հաւ-  
քում բոլոր մազրուղներին միջնորդի տունը՝ հինա տանելու:

## ՀՈՆԸ ՑԵՆՆԵՐ.

Նորաթ օրը քաւորը պատրաստում է հինգան—մի առաջամատոլցի վերայ դնում է կես ֆունտ հինգ, մեաս բազում, մի քողք, քիշմիշ և վերան մի կարմիր թաշկինակ ձգում։ Խոչ փեսի հայրը պատրաստում է հարկը։—մի բակեղակի մեջ թընում է մի տիկ զինի, մի խորօված գառ և զաթայ, Նըրեկոյին հինգան դնում են մի երիտասարդի զլիսի, որ խաղացնելով և կացաւելով առաջ է տանում, իսկ հարկը ձգում են դպիրի շալակը, Երբ փեսի հայրը, աղամարդ բարեկամեները և քաւորը գաւուլ գուռնի առաջնորդութեամբ հասնում են հարսնացուի տունը, առան փայրիկներից մի քանիսը փակում են գուռը և միայն այն ժամանակ են բաց անում, երբ քաւորը տալիս է 20—30 կոպէկ։

Բոլորը ներս են թափում օգան և աւագութեան կարգով նստում. շամուսնացած երիտասարդները հինգան փոփոխակի զլիներին դնելով՝ կարաւում են և երրեմն զովում. ափուս որ հինգի գովասանքը թուրքերէն է։ Հինգան խաղացնելուց յետոյ տալիս են հարսնացուի մօրը։ Այս ժամանակ հիւրերին պատում են մի մի բաժակ օգիսով։ Յետոյ դնում են խոնչան երկու սաւարների միջև և զարսում վերան բողքը, հարսի բգագեսները, մեաս բազումը և այլն, բացի հինից. այս ժամանակ քաւորն աւելացնում է սրանց վերայ երկու հաս երկու մանեթանաց ոսկի։

Քահանան պահանջում է քաւորից ողող բացումն, արսինքն հանգերձի պողը բանալու ընթայ և երբ 40—60 կոպ. ստանում է, կատարում է հարսի քողի, կոմ որ մինեայն է, հանգերձի օրհնութիւնը և ստանում իւր իրաւունքը՝ դընելով խոնչի վերայ երկու ափու, որոնցից մեկը յասկացնում է իրեն, միւսը եկեղեցուն։ Նախ քաւորը ձգում է քահանայի ափուն մի բուրքի, յետոյ փեսայի հայրը, նոյն ափուի մեջ 2—3 բուրքի։ 80 կոպէկ էլ միւս ափուն. յետոյ արդէն միւս մազրուորներն են 1—5 կոպ. խաչհամբօրը ձգում։

Արանից յետոյ ըստը մազրուորները խումբ խումբ նըր-

տան ընթրում են: Մասուցանում են ետքի, քիւթա, վլու և պանիր: Խեկ օզին, որ առասութեամբ բաշխում է, փեառ-  
ի անից բերածն է լինում:

Ըսթրիքից յետոյ խորոված գառը և մի քանի հատ զա-  
թալ բերում զնում են խոնչի վրայ, բահանարի տառի: Մինը  
դասի մի ոտը կոտրում և երկու զոյտ գաթի հետ տալիս է  
քահանալին, որ ուղարկում է իւր տուն, միւս ոտը ամլիս է  
աղջկալ տնեցօց, խոկ մնացածը կամ իրենք են ուտում և  
կամ ուղարկում միջնորդի տունը, առաւտօնեան մազրութիւն-  
րին նախաճաշիկ տալու: Յետոյ արդէն չնորհակալ են լինում  
և գարձեալ գաւուլ զուռնի առաջնորդութեամբ ցրում: Եթէ  
հարսը միենայն զիւղումն է փեսի տանը մի քանի ժամ հա-  
սարակաց պար է լինում: Բաւօրը գնալիս ծաղկացաւոր աղ-  
ջիկներին, որսնց երկու երեք օրից ՚ի վեր ցրջապանել են հար-  
սին և ամէն կերպ զբաղեցնում, ուրախացնում են նրան,  
տալիս է 10—15 կոսկէկ ընծայ:

### ՖԱՇԱՀԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ.

Դեռ մազարը չեկած, գիւղի յափահաս աղջիկները շրջա-  
պատում են հարսնացուին և երեք օր շարունակ նրան անից  
տուն են շրջեցնում, ամէն առջ հիւրասիրուելով: Բոլոր բա-  
րեկամները տուն են տանում և մի շալովի կամ մի թաշկի-  
նակ նուիրում հարսին: Նարամթ երեխոյին հարս՝ ացուն վերա-  
գառնում է հարանց տուն, ուր նախ մայրը և աղա հայրը,  
եղբայրները քորրերը և ծոտիկ աղջականները փաթաթւում  
են նրան և լալիս: Նայըը իրատում և միտիթարում է աղջիկն,  
առելով: «Դեմ, օզույ, Աստուած հետ ըլլի, կերարադի ու  
կեսուրիդ հնազանգ էզի, մարգուգ հաւատարիմ կեցի. մենք  
թէզ թէզ կուզանք քեզի տեսութան, Զատիկին, Վարդեւորին  
տուն կը բերենք»: Դիշերը հարսնացուն և բոլոր ծաղկաց-  
արները ձեռներին հինա են գնում: Կիրակի առաւտօնեան  
մազրութիւնները ձի հեծան զալիս համախմբւում են հարսնա-  
ցուի տան գտուրը: Բամբում և համայիններով զարգարում են

այն ձին, որը հեծնելու է հարսնացուն։ Այս ժամանակ գիւղի համարեա բոլոր ողիկները հաւաքում են հարսնացուի մօս, միխթարում են նրան և թուլ յեն տալիս լազ լինելու։ Կանքում է իրիցիներ, որ ազդիկների երգով կապում է հարս նացուի զլուխը, մօր կաթը կթում է գլխին և զերան աղ ցանում, որ կաթի պէս մաքուր և աղի պէս համազ լինի։ Ունաճանի մէջ ևս լցնում է 7 գարի, որ 7 տարի տզայ չըերէ։ Վերջապէս հարսնացուն գաւուլ գուռնի առաջնորդութեամբ դուրս է գալիս, իսկ եազկոցաւորների խումբը երգում է։

Սղի հարսնաց էկաւ զեղի վերեկն,  
Քեզի ալ քողը ըերեց թղթի թերերէն,  
Միայ մարիկ, մի լայ, էկեր կը տանին,  
Օխան ախզօր մէ քուրը չոկեր կը տանին։

Մարիկներ խափեցին մէ թոփմ շամով,  
Շուրիկներ խափեցին մէ ձեռքմ հինով,  
Սիսոքը խափեցին մէ մահուզ չուփով,  
Մի լայ, մարիկ, մի լայ, էկեր կը տանին,  
Օխան ախզօր մէ քուրը չոկեր կը տանին։  
Հօր խափեցին, մօր լացուցին,  
Սիսոքը լիւլին կօպտեցին,  
Քրոջ վայէն պառատեցին։  
Մի լայ, մարիկ, մի լայ, էկեր կը տանին,  
Օխան ախզօր մէ քուրը չոկեր կը տանին։  
Երթամ էրթամ հեռու տեղեր հնառնամ,  
Էփոր մարիկս միուր ըյիկ, մէջոս բանեմ կրառնոմ,  
Մի լայ, մարիկ, մի լայ, էկեր կը տանին,  
Օխան ախզօր մէ քուրը չոկեր կը տանին։  
Մի լայ, մարիկ, մի լայ, լալողը եւ էմ։  
Հարիս էրկրները հօրոզը եւ էմ։

Հարսնացուն այս երգից զգացուած սաստիկ լալիս է, իսկ Հայոց բանելով սրա ձեռքը՝ յանձնում է սկեսրին, առելով։

— Տէիս, ինամի յան, տիս քո ամանաթդ, տարի Փառք Աստեւ որ էրիսի ջրով կրցաւ քեզի տայ, ուզուրով ըլլի, Աստուած ուուրը պատիին արժանացնէ, մէ բարձիմ ծերանան։ Սեսոյ գառնալով իւր գոտեր, համբուրում է երեսն և տառմ։ «Դնա ողուլ, Աստուած հետզ ըլլի, էսոից յան աս է

բու հարգ, պատռուե ատոնց, մարդուդ հնազանդ էղի, տեսնեմ քեզի՝ երես ու չենէս:

Խոխյն քաւորը 20—40 կոպէի տալիս է այն պատռուան, որ նստել է հարսնացուի ձին, առ իրեւում է և առաջարկում ձին հարսնցուին սկեսրայըը և հայրը վերցնում են հարսնացուին և նստեցնում ձիուն: Յետոյ սկեսրայըը տալիս է երկու բութի սժիսի (արկղի) վրայ նստող կնոջը, 12 շահնաց, որինակ 12 առաքելոց, ոսկի հարսի մօրը, մի քանի կոպէի վարպետավարձ այն կնոջ, որի մօս հարսը մենև, կարեւ, գործել է ոսկորած լինում և բոլոր մազրուարներն աշադրին ազազակներով, հրացանի պայլթիւնով ու լիլիթ խաղալով, զաւուլ զուռնի առաջնարգութեամբ զիմում են գէպի փեսացուի գիւղը: Մազրուարներից մի քանիսն աշխատում են հարսնցուի առնից գաղանալ օղու բաժակի, որ հարսն ուրախ լինի, գգալ, որ հարսը զամազն իւր հետ բերէ: Երբ մօտենում են իջևանատեղույն, հարսի ձիու զաւակին նստեցնում են մի արու երեխայ, այն խորհրդով, որ հարսն արու զաւակինը շատ ունենար: Այս ժամանակ հարսը հանում է զրապանից փաքրիկ հայելին և զարձնում նախ՝ գէպի եկեղեցին և տպա գէպի կերտանց տունը, որպէսզի եկեղեցին գութ տոյ կերտանցը, որ իրեն պայծառ պահեն: Դիւղի մօս հարսին գէմ են բերում մի զառ և հարսը պէտք է ձեռով վերցնէ տանէ ձիու վրայ և կամ հարսնեղրայըը պէտք է կծէ զառի տիանցը և կարէ: Այս զառը համարում է անմեղութեան որինակ: Թագուորն էլ թագուորցուների հետ մի բարձր տեղ պատռում է, երբ հարսն անցնում է, թագուորցուները ուռա են բըզաւում, իսկ թագուորը քիշիշ է լցնում հարսի գլխին, կամ խոնձորով խփում է, որ անուշ լինի: Հարսին իջեցնում են մի կաթռայի վրայ, որ ձմէնով—Համբաւաւարց լինի և զնալով հարս իջեցնովի տունը, բոլոր մազրուարներն ուտում, խմում և ընթրում են: Յետոյ հարսին այնաեղից մեծ ուրախութիւնով բերում են սկեսրանց տուն: Դրան առաջ հարսին ընդառաջ է երեւում սկեսուրը: Աերջինիս աշբարյու են տալիս և հարսը յանձնում նրան: Նա համբուրում է հարսին և մեռը

բանում տանում նրա համար պատրաստած տեղը։ Հետզհետէ հարևան հարսեր և որիորդներ զայխ են նոր եկած հարսին տեսութեան։ Իսկ գրացիները զայխ են աշքալոյ տալու փեսայի հօրը։ Հարսի հետ լինում են նրա երկու հարսնեղբայրները, որպէս նրա թարգմաններն ու հաւատարիմ պահպանները։ Աւելց որ նոր եկած հարսը փաքք ինչ հանգստանում է իւր հարսնեղբայրների հետ, երկու նշանաւոր թագուարցիք<sup>1)</sup> մի չիշ ոզի տառ գայխ են հարսնեղբայրներին տեսութեան։ — Բարով էք էկէ, հազար բարով, տառ են նրանք։ Հըլզու մեր փեսի խանում զանքանը իմացած գըլիք որ թագուարցիներս ընկերութեն կենենք իրեն ոզիզ փեսին հետ, պահենք, պահպաննեք ու ուրախացնենք կը, ու մեր փայն ո զրկած զըլիք ձեզի հետ։

— Խնջ չէ, մենք շատ շնորհակալ ենք, որ զուք մեր փեսին տառէս պահէեք պահպաննեք կը, ոհան, մեր քէլլը զատէ տեղ զրէք, տաէք մեր փայլ, տառ են հարսնեղբայրները։

Ընծան լինում է մի խորսօն հաւ, միքանի զոյդ զաթայ և հարսւու Արդ գիշեր թագուարցիք և հարսնեղբայրները միմեանց վերաբերութեամբ շատ զգորչ են լինում, որպէս հետև տռայիններն աշխատաւմ են մի որևէ բան զօղանալ հարսի վերայից, որպէսզի հարսնեղբայրներին մի բանով տուգանքի ենթարկեն, իսկ վերջինները հնարում են փեսայի վերայ մի բան, կամ աշխատաւմ են թուրքի պարտգաններից մին զողանալ, որ թագուարցուներից մի բան տառնան։

### ԹԱԴԱՅՈՒՄ ԱՌԵԴՆԵՇՆԵԼ.

Նաբարթ երեկոյից սկսած թագուարին շրջապատում են հասակակից շամուսնացած երիտասարգներ, որոնք թագուարցիներ են կուլում։ Սրանք ամէն ջանք գործ են զնում թագուարին զբաղեցնելու և ուրախ ժամանակ անցկացնելու։ Կիրակի օրը թագուարը զնում բարեկամներից մինի տան մէջ

<sup>1)</sup> Թագուարցիներ ընում են մի քանի զառանիներ, որոնց շաբաթ երեկոյից սկսած մինչ երկուարդի, որովհ ուրախ, փեսային ընկերուցում և նրա հետ ուրախութեամբ։

թագ է կենում: Այս ժամանակ քաւորի անից մինը գողիս է և բերում է հինա և մամեղիններ: Արտեղ նա իմանալով որ թագւորը չկայ, խրախուսում է թագւորցիններին գնալ պարել նրան: Մի քանի գիւղերում այս հանդէւոր կտառում են շարտի երեկոյին, ուստի և քաւորը բաժանում է թագւորցուներին մամեր: Բայց թագւորցինները գտւուի զուռնի տակ՝ նորդութեամբ այս ու այն տաւն ընկած պարում են և երբ զանում են, մի չիշ օգի են տալիս տան ակրօնն և թագւորին առնում: Տան տէրը թագւորի բուկը մի ալ թաշկինակ է կտակած լինում իրը նուէր: Թագւորցիք այսուղիս թագւորին չարքեասիւ աջ թեր հանած և քաւորը աջ կողմը հանդնած կաքաւելով տանում են քաւորի առւեր, ուր նախ մի հօրով մօրով չամուսնացած երիտասարդի, տար թագւորի և յետոյ քաւորի երեսները սափրում են: Սափրէլը թագւորի միերուքի կեսը սափրելուց յետոյ կանգ է առնում և տառմ: Անձրէնն քառ է, չի կորէ, ներմակ լիսան կ'ուզէ: Քաւորը մի քանի կոսպէկ է տալիս:

Սափրելուց յետոյ թագւորցիք նախ մի հօրով մօրով չամուսնացած երիտասարդի և ապա թագւորին լողացնում են զամը տաշանի մէջ, որովէազի նա ևս ալդ երիտասարդի պէս հօրով մօրով մնայ: Աերջը զիսի մազերը վեր ցցելով տնառ են քառում զրան և տառում: Անէ, քանքիւը ծուռն է, զըզէ, քաւոր ազառ: Քաւորը մի չիշ օգի է իսուսանում: Թագւորին լողացնելուց յետոյ մինը շարտիում բերում է օգան, ուր և հազցնում են հանգերձը: Այդ օրը հարսնացուի տանից զաւուի զուռնի տուղարկուած է լինում վեռացուին մի շապիկ, մի վարտիկ, մի լատափի արխալուզ, մի մահուդ չուխտ, կլասպիտանով ելակ, զանգեալ, գուլլայ և ապրեշում գիւղպազի (Ֆընկի կազ): Բերողին պատում և մի զորդ չուստիկ են նորիրում: Այս ժամանակ հրաւիրում են քահանային, սրհնել տալիս հարսնացուի տանից ուղարկուած փեռացուի վերալիշեալ հանդերձները և մի քանի կոսպէկ աջհամբայր տալով նրան նամպում ու իրենք երգեր երգելով հազցնում, զարգարում թագւոր-

րին. Ամէն մի հազուսող հազցնելիս վեր են բարձրացնում, տոյց տալիս հաւաքուած կանոնց և գոյում. — Աշեցէք, ժամանիք (ճայրիկներ), չերթոք փուշ (խարդախ) մօրերուզ հարերուգ զանգափիք, մեր թագւորի զոնքանչն իր փեսին որրիեր է առ . . . ուր տեղաց բան է: Հանգիստիանները հեռաւոր տեղերի անուն են տալիս. Սամերօլու, Չինիժայինու, Պէտակազու . . . բան է . . .

— Կին Բնէ է:

Եսու բարձր են զնահատում: Մի բուրլու իրեղէնին հարիւր բուրլի գին են զնում:

— Լաւ զնահատեցիք, չե՞ն մեայ զոնքանյը, գոյում են թագւորցիները և հազցնում երգելով.

Հայ հազուցէք, հազուցէք,

Տարէք խաս պտխշան թագւոցէք,

Բժբուլ գոզինէք (անկոզին) ձգեցէք,

Վարդ ծաղիանց մէջ քուն գրէք:

Քաւորն այս ժամանակ մի զոյզ եամանի է նուիրում թագւորին և մի ալ թաշկինակ կապում վեզը, նայրերը բաց թողնելով: Խոկ հին չուստիկները ժամանոյը դալիս պահնջում առնում է իրեն: — Ծեայ թագւորցիք նստում ոզի են խումամ, հաց ուսում, որ առ նուազն երեք տեսակից է բաղկացած լինում — խաշ, եաբնի և փլաւ: — Կաքաւում, շարունակ երգում և ուրախանում: Հացից յետոյ թագւորցիք դաւուլ զուռնի առաջնորդութեամբ տանում են փեսացուին իրենց տուն: Մայրն ընդգառաջ է ելնում փեսացու որդուն և համբուրում է աշքերը: Թագւորցիք շնորհաւորում են մօրը՝ ասեղով: Ալլէք լուս, Ասաւուան սուրբ պատին արժանացնէն: Մայրը շնորհակալ է լինում և բոլորին հրաւիրում է առւն, ուր մի բարձր տեղ կամ աթոռի վերայ նստում է թագւորը: Դրոից եկողները յանախ տում են: Թագւուրը թամա էն: Խոկոյն թագւորը ելնում կանգնում է: Միւսները պատասխանում են: Առաջնու զան էու Նև այս ժամանակ թագւուրը նորից նստում է: Երեխոյին թագւորի և թագուհու մեջերը հին են զնում:

## Պ Ա Բ Ա.

Պատկի խորհուրդը կատարում է երկուշաբթի տառօտեան: Առաւոտ զաղ փեսայի անեցիներից մին մի չի ողի տառծ գնում հրաւիրում է նախ քաւորին և յետոյ քահանային ու հարսներներին կամ մազրուըրներին: Բալոր զալիս հաւաքըում են փեսի տունը, օղի խմում, նախաճաշում և գնում հարսնառ: Դաւուլ զուռնի առաջնորդութեամբ ազամորդիկ և կանալք գնում են հարսի տունը, թագուորի կողքից սուրը ձեռքը գնում է քաւորը: Թագուորը ու քաւորը կանգնում են տան մէջ տեղը: Թագուորցիք բզաւում են: «Թագուորը թոփալ է»: Հարսի կողմի մարդիկն ել բզաւում են: «Հարսը թոփալ է»: և այս այն նպատակով, որ հարս ու փեսայ զւտով միմեանց մօտ գտն: Այս ժամանակ հարսը լալիս է: Հայրը համրուրում է հարսին և տում: «Դնա օղուլ, Աստուած հետք ըլլի, ինեւք ու շնորհք տոյ, խօնարհ ըլլիս, մարթուդ հնազանդ ըլլիս»: Հարսնացուն փաթաթւում է հորը և ձեռքն ու կուրքքը համրուրում, որպէսզի հօր ձեռքն ու գութը իւր վրայից անզական լինի: Հայրը հարսնացուին յանձնում է փեսի հօրը և տում: «Մաք, մէկին հազար խէրը տեսա: Սա բանում է խնամու ձեռքը, տեղմում է և տում: «Ենորհակալ եմ, չեն ու պայծառ մնայ տունդ, մեր բարեկամութենը էստի էտե պըտի ըլլիս: Այս ժամանակ հարսը խոնարհում և համրուրում է կերտարոշ ոտքը: իսկ ոս զեր բարերացնելով նրան՝ տում է: «Մի ըայ, օղուլ, ես սոզ ըլլիմ: Հարսն ու փեսին կանգնեցնում են միմեանց մօտ՝ հարսը փեսի աջ կողմը, փեսի մօտ քաւորը, հարսի մօտ հարսնեցրայրը թեանցուկ: Այս ժամանակ հաւաքըում կանալք տում են մօրը: «Թնդրի խփին նստի, թնդրի խփին, որ աղջիկդ տունը մնայ ու շատ ա շրջիկ ըլլի»:

Քահանան կատարում է ձեռնազրութիւնն և բոլորը շարժւում են գեղի եկեղեցի: Խւրտանցիւր զանից անցնելիս քաւորը սուրը խփում է զրան սոսպին: և հարս ու թագուոր անցնում են սրի տակով, որպէսզի չարը չիսիէ նրանց:

Սրանց առաջնօրքում է գուռով գուշանան։ Թագուարցիք կարտում, զատեմարտում, հրացան են արձակում և իրենց ազագահներով օդը թնդացնում։ Յանկարծ մինը վազում և թագուարի զյխարկն առնում փախչում է։ Թագուարցիք ընկնում են հետեւ և եթէ բռնեն մի լաւ թակում ու գտակը բերում զնում են թագուարի զյուիր, իսկ եթէ չեն կարգանում բռնել փեսի անից բերել են առջիս մի հաւ, երկու զաթար, մի շեշ զդի, առջիս նրան և առնում գտակը։ Այս ստացածը պատկանում է բարոր թագուարցիներին։

Երբ հասնում են եկեղեցւ գուռը՝ ժամակոցը կամ երեսփախանը փական է լինում գուռը և բաց է անում միայն այն ժամանակ, երբ քաւորից ստանում է 10—50 կոպէկ։

Պատկի խորհուրդը կատարելուց յետոյ, քահանան առջիս է թագուարի ձեռքը Աւետարան, իսկ քաւորի ձեռքը խոչ և կանգնեցնում սեղանի առջև։ Բոլոր հարսնեարները նախ համբուրում են քահանայի ձեռի խայը, յետոյ թագուարի կրծքի բռնած Աւետարանը և քաւորի ձեռի խայը և խոչ համբուրը ձգում մասը գրան ափսէի մէջ, որ պատկանում է քահանային։

Եետոյ շարականի և ձնձնակների հնչիւնոց գուրս են զայիս եկեղեցուց և ուղեարում զէպի փեսայի տունը։ Այժմ ուրախութիւնն առաջուանից կրկնապատկում է, հրացանների պայթիւն, ինցցէներ, զատեմարտ և կաքառ առջի են ունենում զրեթէ ամէն քայլում։ Մի քանին ել ոչխար, գառ, հաւ են բերում զետին խփում թագուարի առաջ և զանակը քառում, սպասելով քաւորի հրամանին։ Եթէ հրամարում է, մորթում են և արինից քում թագուարի նակատին, իսկ եթէ ոչ՝ մի քանի կոպէկ ստանում գնում։ Կէս նահապարհին հարս և փեսայ կանգ են առնում, մինը կաքառում է, իսկ նշանան երիտասարդների հարսի կողմից ազգականները մի մի թաշկինակ են կապում իրենց փեսայացաւների բկերն ու թեերը, իսկ թագուարցիք բզառում են։ Եէն կենայ ար ինչը, կանչել է փեսին մէ եալլզզմ։

Երբ մասենում են թագուարի տանը, թագուարցիք բարձը կանչում են։

Թագուարամէր, զուս արի,  
Դոփ զռան զէմ արի.  
Ֆու խաչ սրդիդ էկեր է.  
Դաշտայ գովիթի բերեր է:

**Մօր հետ գուրս եկաղներն ել կանչում են.**

Թագուարամէր, զուս զնա,  
Դոփ զռան զէմ զնա.  
Ֆու խաչ սրդիդ էկեր է.  
Դրսիդ զմիոն բերեր է:

**Թագուարցիք շարունակում են.**

Թագուարամէր, շարունակում արի,  
Դոփ զռան զէմ արի.  
Ֆու խաչ սրդիդ էկեր է.  
Ծներդ աւզող բերեր է:

**Մօր կողմինները.**

Թագուարամէր, զուս զնա,  
Դոփ զռան զէմ զնա.  
Ֆու խաչ սրդիդ էկեր է.  
Մոզդ փետող բերեր է:

**Թագուարցիք.**

Թագուարամէր, զուս արի,  
Դոփ զռան զէմ արի.  
Ֆու խաչ սրդիդ էկեր է.  
Ծնդիրդ վասող բերեր է:

**Մօր կողմինները.**

Թագուարամէր զուս զնա,  
Դոփ զռան զէմ զնա.  
Ֆու խաչ սրդիդ էկեր է.  
Մնդիր կոխազդ բերեր է:

Աերջապէս թագուարամայրը գուրս է զայխո, խակայն թագուարցիք մի գարձրած փափախ (գգտկ) գնում են զլսին, աւելլ սրպէս ազի կապում յետեից, սամբները զօսին խըցկում: Թագուարամայրը պարում է և թագուարի ու հարսի աշքերը համբուրում: Այս ժամանակ խահարաբուհին տայխո է թագուարցուներին մի հաւ և ափօտի մէջ զրած հալուսու ու մի քանի զորդ զաթայ: Թագուարցիներից մինը դաշոյնի մի հարուանով կարում է հասի զլուխու: Եթէ ցախողացրեց

մի հաւ տուզանք է տալիս, և արժմ մի ուրիշ թագուարցու է աշխատում թացնել գրա զլուխը: Այս հաւերը և զաթան ու հալուան տալիս են խոհաբարուհուն պահելու, որ միւս որք վերադարձնէ: Մինն ել մի հաւու է բերում և հարոնեղարձն ամենայն պատրաստականութեամբ խածում է նրա ականջը, որ հարսի սոքը ռուզուրավ ըլլիի:

Հարս ու թագուար մտնում են ներս, նրանց առաջ ձրգում են թանքի ակիցը, եթէ հարսը վերցրեց՝ տնարար է, եթէ չվերցրեց՝ տնաւեր, հարսին տանում են առւն, ուր նա փոքր ինչ տեղում է, որպէսզի խօսվութիւնը կերսանց տանից հեռանալ, փոքր ինչ աղ տանում ցանում է կերակրներին, որ կերսանց հետ սիրով տպրի: Յետոյ տանում օդի կամ առա մի անկիւնում վարագործ կարած բաժնում նոտացնում: Բայց խոհաբարուհին նրանից առաջ բազման է լինում հարսի տեղը, մի զայդ զույրայ պէտք է տալ, որ վեր կենար:

Բոլոր հարսներները զնում նոտում են օգան, բերում զնում են խոնցան և սկսում է սայսու, նուիրատութիւններ լոգուս նորապատճերի:

Սայսու կանչաղը բարձր բզաւում է.

— Ըսէք շէն մնայ, շէն մնայ:

— Ո՞վ, հարցնում են այս ու այն կողմից:

— Ազտ արսինը. Ֆին վազուկ ըլլի, թուրը կարուկ ըլլի, բարեկամը բարեկամ, շարտկամը քոս ըլլի. իրէք մանէթ թագուարին ընծար:

Նէն մնայ, շէն, զայսում են այս ու այն կողմից:

Սայսուից հաւաքում է մատուարտէս 20—90 ըուբի, նայելով թէ հարսանիք անօզր և նրա հարսներները ինչ կարուութեան տէր մարդիկ են:

Սայսուից յետոյ գաւաւննիք են զնում զաւուլը, որ տեսնեն, արսինքն փող տան. ամէն մարդ 3—20 կ. փող է նրա սիրում:

Սրանից յետոյ ել խոհաբարուհին է գալիս և 2—20 կ. իւրաքանչիւրից տանում, որ խաչի բերանը բանար:

Աերջապէս բոլորում են սեղանների գուրզը և տեսնայն

ախորժակով ուսում խաշ, եալի, քիւֆթա, փլաւ և պանիր: Խոկ ոզին առատութեամբ բաշխում է տան երիտասարդներէց մինի ձեռքօվ:

Նաշից յետոյ հասարակաց պար է լինում կամ փեսի գոմում, եթէ միայն այն ընդուրձակ է և կամ մի ուրիշ: Պարը անում է մինչև կես գիշեր և գրան մասնակցում է ամբողջ գիւղը, առանց նոյն խոկ հրաւիրուելու:

Գիշերը հարսը զնում քաւորին հանուեցնում, պարկեցնում է, խոկ ինքը գալիս հարսնեղրար հետ է պարկում. խոկ փեսան զնում մանում է քաւորի նոցը:

Հետևեալ երեքշարթի օրը թագուարի անեցիք հրաւիրում են սայսու առուղներին և քաւորենց, թէլ, ոյի խմացնում և ճաշ տայիս, որից յետոյ քահանան վայր է անում պատկը և մի քաժակ ոշարակ խմացնում հարս ու փեսին: Եթոյ քահանան անում է քաւորի սուրը և առում. Հարսի լեզուն պիտի կտրեմ: Թագուարամարը ազայում է լիբարել և մի զոյտ գուլքայ է նուիրում:

Թագուարցիք էլ առնում են խօհարարուհուն պահ տուան իրենց հաւերը, զաթան ու հալուան, միանում են հարսնեղրարների հետ, առնելով նրանցից և նրանց բաժին մի քանի զոյտ զաթան, մէկ թոփ հալուան, մի խօրոված հաւը, հարսնանցից էլ մի շիշ ոյի, փեսայի հետ իմ միասին մի տեղ հաւացւում, ուսում, խմում, ուրախանում:

Նըրեկոյին հասարակաց պար է լինում: Կես գիշերին հարսը ու փեսան միմեանց ձեռք բանած մանում են պարը, քաւորը փեսի, խոկ հարսնեղրամը հարսի ձեռքն է բանում, մի մի վառած մում էլ ցանկացողը առնում է ձեռքը և պարում են: Ճաղովրդեան բացատրութեամբ մասը օրինակ է պատկին: Պարելիս թագուորը աջ ձեռքօվ հանում է աջ գըր պանից ցորեն և շաղ է տայիս, որպէսզի, իրենց բացատրութեամբ, ցորենը առատ լինի: Սրանով նա իրաւունք էլ է սասանում ցորեն ցանելու, որովհետեւ յամուսնացտեներն իրաւունք լուսին ցորեն ցանելու:

Երեք պառյա կատարելուց յետոյ՝ հարս ու փեսան գուրու

են տալիս պարփակ, որ փոքր ինչ էլ տեսմ է և վերդանում:

Չորեքշաբթի առաւտա հարսնակը հրաւիրում է կնքահայրերին, կնքակիններին և մօսիկ ազգականներին և թեյով ու նախաճաշիկով պատում: Նախաճաշիկոց յետոյ ուրիշ գիւղերից եկած հարսնակներին և հարսնազբարը ճանապարհ են ձգում զաւուլ զուսնով: — Դիշերը հարս ու ժեռան առաջատա են մանում: Խոհարարուհին ձգում է անկողինը, մօսը հարսւա, մեզը ու շաքար գնում, որ նորապատիններին անուշ սիրով—լինին, ինչն էլ դռան յետև պահ է մանում, սպասելով կուսութիւնն ապացուցանող չշարսաւին: Եւ եթէ մի փոքր ինչ ուշանում է, նախաճելով շատապեցնում է:

Եթէ աղջիկը կուսութիւնը կորցրած է լինում, զախենալով այն մեծ նախատինքից որ կրելու է անեցիններից և որ բանց ազգականներից, արտաւում և ներզութիւն է խրնդրում ամուսնուց, որ կաշուում է խոհարարուհուն և սա մի աղաւնի մորթում ու արիւնուում է չշարսաւը:

Խոհարարուհին տանում չարսաւը ցոյց է տալիս նախ փեսի և ապա հարսի մօրը, զերհաւորում նրանց և ընծաներ սատնում:

Հինգշաբթի առաւտա հրաւիրում են ազգական և գրիփ կանայք, այդ որը բացուապէս միայն զրանց է պատկանում: Հաշին մատուցանում են խուին և այս կերակրի անունով այս որը կօգուում է խունի օր: Նախ քան նաշի նառելլ հրաւիրուտներին աշքի բայ են տալիս և հեռան ցոյց էին տալիս չշարսաւը, սակայն այժմ այդ սովորութիւնը վերացել է: Նաշից յետոյ բերում են հարսի օժիտը և մի կին նախապէս մի բուրյի նուէր սահանլով կեռուրից, բաց է անում և մէկ ցոյց տալիս հանգիստականներին:

Հարսի օժիտը պատրաստում է հազէմասու, սաշուի և երեստեանքի փողերով: Հայրը ոչ միայն իրենից ունին լի անում, այլ և այդ փողերից գողանում է: Հարսի օժիտը զբիտուրապէս բաղկացած է լինում հետևեալ կաորներից:

Երկու շախան ջուզպա.

Մէկ փոթալի շոլ.

Մէկ զատիքա խրիս.

Մէկ հաղոցա խրիս.

Երկու իշխն. մէկը ֆանել, միւսը պուրա.

Տորս անթարի.

Ցան և մէկ հատ շապիկ.

Եղիշան վարտիկ.

Ցան և երկու հատ կրծկալ.

Եզրն հատ գոզնոց, 5 շալից, 2 մանուզից.

Մի հրած.

Եղիշ տառն և երկու շարսից.

Երկու վարդ.

Երկու եղանակ.

Երկու չիշիս.

Երկը թռու կամ եսփուզ.

Երկը զոյդ ունաման—մի զոյդ կիսակաշիկ, երկու զոյդ մետ բարում, երկու զոյդ գուլրայ, մի արկդի, միջը թել, կը, ասեղ, նազ, թեշիկ, լուցիկ, հայելի,

Վիշ—նուկրներ.

Կերսարսից՝ մի շապիկ, վարտիկ.

Կեսուրտից՝ մի վարտիկ.

Տազրիներին՝ մի մի զոյդ գուլրայ և թողուխ.

Կերտարից՝ մի շապիկ, վարտիկ.

Կերտարի անեցիներից խրաբանչիւրին՝ մի մի զոյդ գուլրայ և անեպան կամ կանանց գուլրայ և զոզնոցի կապ:

Փեսի բարեկամներին, որոնք նուկրներ են տուել հարսին, նայելով նրանց տուածին, շամաշուր կամ գուլրայ, ունապան նոյն:

Սորսհարսը մի կարճ միջոցից յետոյ այս հանգերձներից մի քանիսը նախում և իւր սոկիները մանրում ու մի գումար կազմերով, շահով է տայխա, որպէսզի իւր և իւր որդիների հանգերձը հոգայ, որովհետեւ կերսանքը շատ հազիւ է պատահում որ հարսերին կամ նրանց որդիներին չոր անեն: Այս դրամը հարսերը ուղագին են կոչում:

Այսպէս վերջանում է հարսանեաց հանգէոը և այնուհետեւ սկսում սովորական կեանքը: